ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար <<Երևանի Կ. Դեմիրճյանի անվան թիվ 139 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի (նոր մասնաշենքի) կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/22 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հոկտեմբերի 3-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/22 պայմանագրում 2020 թվականի հունվարի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

1) Փոփոխության առաջացման պատճառ	Աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգման անհրաժեշտություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով:
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և Պայմանագրի 7.5 և 7.6 կետեր:
2) Փոփոխության առաջացման պատճառ	Կատարողի բանկային վավերապայմանների փոփոխության անհրաժեշտություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում փոխվել են Կատարողի բանկային վավերապայմանները:
Փոփոխության հիմնավորում	Կատարողի գրություն և Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

03.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/22 գնման պայմանագրի

ք. Երևան 30.01.2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ս. Օհանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով <<Երևանի Կ. Դեմիրճյանի անվան թիվ 139 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի (նոր մասնաշենքի) կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 03.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/22 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

ա) Պայմանագրի N 1 հավելվածում աշխատանքների կատարման ժամկետին վերաբերող բոլոր տեղերում <<119>> թիվը փոխարինել <<149>> թվով:

բ) Պայմանագրի N 1.1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

գ) Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում Կատարողի բանկային վավերապայմաններում <<<<Էվոկաբանկ>> ՓԲԸ Հ/Հ 1660000215670100>> բառերը և թվերը փոխարինել <<<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Հ/Հ 1150015416286200>> բառերով և թվերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 2 (երկու) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Երևաննախագիծ>> ՓԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Բուզանդի 1/3
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1150015416286200
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 02500241
Հ/Հ 900011027902	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	/Տնօրեն՝
Ա. Մկրտչյան	Ս. Օհանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
03.10 2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/22 պայմանագրի
30.01.2020թ. կնքված N1 համաձայնագրի

<<Հավելված N 1.1
03.10.2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/22 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

<<Երևանի Կ.Դեմիրճյանի անվան թիվ 139 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի (նոր մասնաշենքերի) կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման

Հ.հ	ՆՆՓ մշակման աշխատանքի գործընթացները և փուլերը	Շաբաթների քանակը (ընդամենը 149 օրացուցային օր)																					
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
1	Ելակետային նյութերի հավաքագրում																						
2	Հողատարածքների գեոդեզիական աշխատանքների իրականացում և հանույթների պատրաստում																						
3	Նախագծման առաջադրանքի հիման վրա շենքերի ծավալահատակագծային մանրամասն լուծումների իրականացում և համաձայնեցում պատվիրատուի հետ, այդ թվում շինությունների եռաչափ մոդելավորումը																						
4	Համաձայնեցված հատակագծային լուծումների հիման վրա ՃՀԱ ստանալու դիմումի համար անհրաժեշտ ԷՍՔԻԶԱՅԻՆ առաջարկի նյութերի լրակազմի պատրաստում՝ ներառյալ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման, հրդեհաշիջման և կոյուղու հաշվարկային հզորությունների տրամադրում																						
5	Անհրաժեշտության դեպքում ստացված ՃՀԱ-ին ճարտարապետաշինարարական լուծումների համապատասխանեցում																						

6	Ներքին ինժեներական ենթակառուցվածքների նախագծային լուծումների մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ																						
7	Արտաքին ինժեներական ենթակառուցվածքների մշակում ստացված տեխնիկական պայմանների հիման վրա և համաձայնեցում պատվիրատուի հետ																						
8	Աշխատանքային նախագծի լրակազմի մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ՝ ներառյալ շինարարության կազմակերպման նախագիծը																						
9	Նախագծի լրակազմի քաղաքաշինական փորձաքննության իրականացում և դրական եզրակացության ստացում																						
10	Մշակված նախագծի հիման վրա նախահաշվի կազմում																						
11	Համաձայնեցում շահագրգիռ մարմինների հետ և անհրաժեշտ եզրակացությունների ստացում																						

>>:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027902
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝ /Տնօրեն՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Երևաննախագիծ>> ՓԲԸ
ք. Երևան, Բուզանդի 1/3
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150015416286200
ՀՎՀՀ 02500241

_____ Ս. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ.